

«Հաստատում եմ»՝

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարանի ռեկտոր՝ Ե. Սերոբյան
«11» նոյեմբերի 2025թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վիկտորիա Ռուբենի Բաղդասարյանի «Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ» վերնագրով, ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Այսօր՝ ազգային ինքնության պահպանման, հոգևոր վերածննդի և կրթության արժեքների վերաիմաստավորման պայմաններում, առավել քան երբևէ, կարևոր է անդրադառնալ Գարեգին Ա Վեհափառի մանկավարժական և հոգևոր ժառանգությանը: Այս մոտեցումը արդիական է և գիտականորեն հիմնավորված, քանի որ Վեհափառի գործունեությունը համադրում է հավատքը, կրթությունը և ազգային գաղափարախոսությունը՝ դառնալով յուրատեսակ կամուրջ անցյալի և ներկայի միջև:

Ատենախոսության ներածությունը կառուցված է գիտական աշխատանքի պահանջներին համապատասխան, որտեղ հստակորեն ձևակերպված են հետազոտության նպատակը և խնդիրները:

Պաշտպանության ներկայացված դրույթները բովանդակությամբ համապատասխանում են հետազոտության նպատակին և ընդգծում են թեմայի նոր դիտանկյունը՝ ներկայացնելով Գարեգին Ա-ին ոչ միայն որպես հոգևոր առաջնորդի, այլև որպես առաջադեմ մանկավարժի և դաստիարակի:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է Գարեգին Ա վեհափառի մանկավարժական հայացքների ամբողջական և համադրական ուսումնասիրությամբ՝ ներառելով ինչպես հրապարակված աշխատությունները, այնպես էլ Հայաստանում և

Լիբանանում պահպանվող արխիվային աղբյուրները: Սա ապահովում է թեմայի նորովի գիտական մեկնաբանությունը և վերլուծությունը:

Ընդհանուր առմամբ, ներածությունը գիտական առումով ամբողջական է և համակարգված, որտեղ հաջողությամբ ներկայացվում են հետազոտության գիտական հիմքը, հետազոտական ապարատի բաղադրիչները:

Ատենախոսության առաջին՝ «Ծայրագույն Պատրիարք եվ Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տեր, Տեր Գարեգին Առաջինի (Նշան Սարգիսյան) կյանքն ու գործունեությունը», կազմված է վեց ենթագլխից, որտեղ առաջին երկու ենթագլուխները ներկայացնում են Նշան Սարգիսյանի՝ հետագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի հոգևոր և մտավոր կերպարի ձևավորման փուլերը՝ ընդգծելով նրա՝ սփյուռքյան հայկական միջավայրում ձևավորված ինքնությունը և Դպրեվանքի դաստիարակչական դերի բացառիկ նշանակությունը:

Առաջին ենթագլխի գլխավոր շեշտադրումն այն է, որ Նշան Սարգիսյանը **երկու հայրենիքների միջավայրում** է ձևավորվել. Սիրիան նրան տվել է հյուրընկալ և բարեկամ միջավայր, իսկ հայկական համայնքը՝ ազգային ինքնության խոր զգացում և հոգևոր ամրություն:

Երկրորդ՝ «Նշան Սարգիսյանի ուսումնառությունը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Դպրեվանքում» ենթագլխի գաղափարական առանցքն այն է, որ Գարեգին Ա-ի հոգևոր վաստակի հիմքը դրվել է դեռևս երիտասարդ տարիներին՝ Դպրեվանքում ուսանելու շնորհիվ: Հեղինակը Դպրեվանքի պատկերը վարպետորեն է ներկայացնում ոչ թե պարզապես որպես կրթական հաստատություն, այլ **հոգևոր դարբնոց**, որտեղ ձևավորվում են ապագա եկեղեցականների մտածողությունը, հավատքն ու ծառայական գիտակցությունը:

Երրորդ ենթագլխում՝ հեղինակի կողմից ներկայացվում և մեկնաբանվում է, թե ինչպես Նշան Սարգիսյանը վերածվում է համընդհանուր մարդասիրական արժեքներ կրողի, առանց ազգային և եկեղեցական սեփական ինքնությունը կորցնելու: Վեհափառի կյանքի Օքսֆորդյան ժամանակաշրջանը կարելի է մեկնաբանել որպես հայ մտավորականի նոր տիպի ձևավորում, որը միաժամանակ գիտնական է, աստվածաբան և մշակույթի դեսպան:

Չորրորդ ենթագլուխը, որը կրում է «Գարեգին Սրբազանի հոգևոր գործունեությունը. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Սպահանի, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի և Կանադայի թեմի առաջնորդ» վերնագիրը, առանձնանում է փաստագրական բացառիկ հարստությամբ, ամբողջականությամբ և պատմական խորությամբ: Հեղինակը հետևողականորեն ներկայացնում է Գարեգին Սրբազանի գործունեության բազմաշերտ դրսևորումները՝ ընդգծելով նրա դերը հայ եկեղեցական, կրթական, մշակութային և հասարակական կյանքում: Ներկայացված ուսումնասիրությունները հենված են արժանահավատ աղբյուրների, հուշագրական և պատմական վկայությունների վրա, որոնք ունեն գիտական բարձր արժեք:

Առաջին գլխի հինգերորդ՝ «Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հոգևոր-հասարակական գործունեությունը» ենթագլխում ներկայացվում են Գարեգին Երկրորդ կաթողիկոսի գործունեության լայնածավալ՝ հոգևոր, կրթական, մշակութային, դիվանագիտական և էկոմենիկ գործունեության տարբեր դրսևորումները, ըստ ոլորտների վերլուծվում են նրա ձեռնարկները, նախաձեռնությունները և ազդեցությունները հայ եկեղեցու ու համայնքային կյանքի վրա:

Ատենախոսական աշխատանքի առաջին գլխի վերջին ենթագլխում, որը վերնագրված է «Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի հոգևոր և հասարակական գործունեությունը Հայաստանում», հեղինակը, ցուցաբերելով համադրական և վերլուծական կարողություններ, ներկայացնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներքին և արտաքին գործունեությունը, Քրիստոնեական դաստիարակության և Քարոզչության կենտրոնի գործառույթները, եկեղեցու և պետության հարաբերությունների հաստատման գործընթացը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքների ձևավորման նախադրյալները», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում, որը վերագրված է **«Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեությունը Դպրեվանքում**, ներկայացված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի մանկավարժական գործունեության ամբողջական ու խորքային պատկերը՝ ընդգծելով նրա՝ որպես ուսուցչի, գիտնական և հոգևոր առաջնորդի բազմակողմանի դերը: Հեղինակը հաջողությամբ բացահայտում է

Վեհափառ Հայրապետի մանկավարժական հայացքների ձևավորման նախադրյալները՝ հիմնվելով փաստական նյութի, ժամանակակիցների վկայությունների և իր իսկ աշխատությունների վրա: Հավելենք, որ հեղինակը կարողացել է հավասարակշռել պատմական փաստերը վերլուծական դիտարկումներին և գիտական, հոգևոր-արժեհամակարգային մոտեցմամբ ներկայացնել Գարեգին Ա-ի ներդրումը հայ մանկավարժության պատմության մեջ:

Երկրորդ ենթագլուխը՝ «Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական հայացքները հրապարակախոսության մեջ», առանձնանում է գիտական, վերլուծական և տեղեկատվական բարձր արժեքով: Հեղինակը հանգամանալից կերպով է ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի բազմաշերտ գործունեությունը. վերլուծվում են նրա հողվածներն ու գրքերը, որոնք ոչ միայն տեսական աշխատություններ են, այլև ժամանակի և ժողովրդի հետ երկխոսող գաղափարախոսական արժեքներ: Գարեգին Ա-ի հեղինակած գործերը ատենախոսի կողմից դիտարկվում են միաժամանակ և՛ որպես գիտական ուսումնասիրություններ, և՛ որպես բարոյական ուղեցույցներ, ինչպես նաև մանկավարժական սկզբունքներ՝ հավատքի, սիրո, առաքինության, հոգևոր կյանքի և պատասխանատվության շուրջ:

Երրորդ ենթագլխում՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական գործունեությունը Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում», ընդգծված է Գարեգին Ա-ի առանձնահատուկ դերը Գևորգյան ճեմարանի կրթական միջավայրի վերակազմավորման գործում: Ըստ հեղինակի՝ նրա ջանքերով ճեմարանը ոչ միայն վերականգնվեց, այլև դարձավ նոր ոգու կրող մի կենտրոն, որը նպատակ ուներ դաստիարակելու գիտակից, ազգասեր, հավատավոր և կրթված հոգևորականների սերունդ: Այդ առումով Գարեգին Ա-ի գործունեությունը դիտարկվում է ոչ միայն որպես վարչական հաջողություն, այլ որպես ազգային կրթական գաղափարախոսության վերածնունդ: Եվ ինչպես նշվում է աշխատանքում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի նշանավոր միտքը՝ «Գիտության նպատակը գիտությունը չէ, գիտության նպատակը կյանքն է», խտացնում է Վեհափառի կրթական փիլիսոփայությունը, որը միտված է ձևավորելու ոչ թե պարզապես գիտակ, այլ հասուն հոգևոր անհատ՝ ծառայելու եկեղեցուն և ժողովրդին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքները», բաղկացած է չորս ենթագլխից, որի առաջին ենթագլխում՝ «Մանկավարժական հիմնախնդիրների վերլուծությունը Վեհափառ Հայրապետի աշխատություններում», ներկայացված է Գարեգին Ա-ի մանկավարժական հայացքների էությունը՝ կենտրոնանալով մարդու անձի ձևավորման, երջանկության և ինքնաճանաչման հիմնախնդիրների վրա:

Երկրորդ ենթագլխում՝ «Ուսուցման հարցերը Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի աշխատություններում», հեղինակը հաջողությամբ բացահայտել է Վեհափառ Հայրապետի՝ ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների վերաբերյալ առաջադեմ ընկալումները, համագործակցության, սիրո, անձնային օրինակով դաստիարակության կարևորությունը կրթական գործընթացներում:

Ատենախոսության մեջ արժևորվում է այն հանգամանքը, որ հեղինակն իր վերլուծության մեջ համադրել է Գարեգին Ա-ի գաղափարները հայ և համաշխարհային մանկավարժության ու փիլիսոփայության ուղղությունների հետ՝ ապահովելով գիտական ինքնատիպ աղերսներ:

Երրորդ ենթագլխում՝ «Մայրենի լեզվի արժևորման հարցերը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի աշխատություններում», հանգամանորեն վերլուծված են գրի և լեզվի աստվածահաս բնույթը, եկեղեցու դերը՝ որպես մշակութային և կրթական օջախ, Գարեգին Ա-ի կերպարը՝ որպես հոգևորական և մտավորական, դերը հայ գրականության և լեզվամտածողության զարգացման մեջ, հարցեր, որոնք հստակորեն կապվում են միմյանց՝ կազմելով մեկ գաղափարական ամբողջություն:

Չորրորդ ենթագլխում՝ «Ուսուցչի նկարագիրն ըստ Ծայրագույն Վարդապետ Գարեգին Առաջինի», հեղինակը ներկայացնում է Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունեությունը՝ որպես մանկավարժ, հոգևոր առաջնորդ և ազգային մտածող: Հեղինակը ներկայացնում է Վեհափառի գործունեության նկարագիրը, նրա գաղափարախոսությունը, արժեհամակարգը և ճգնության՝ որպես կյանքի փիլիսոփայության ընկալումը: Այստեղ բավականաչափ հաջողված է ներկայացված հոգևորականի և մանկավարժի կերպարների միաձուլումը: Գարեգին Ա-ի ուսուցչությունը ներկայացվում է ոչ թե միայն որպես մասնագիտական գործունեություն,

այլ որպես ծառայություն՝ ազգային, բարոյական և աստվածային արժեքների դիտանկյունից:

Ենթազխում տեղ գտած հիշատակումները՝ Ագաթանգեղոսից, Գառնիկ Անանյանից, Գագիկ Հարությունյանից, Տ. Տաթև Սարգիսյանից և այլոց, աշխատանքը դարձնում են հավաստի՝ ընդգծելով դրա գիտափաստագրական հենքը:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «Դաստիարակության հիմնահարցերն Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական մոտեցումներում». բաղկացած է չորս ենթազխից:

Առաջին ենթազխումը՝ **«Վեհափառ Հայրապետն անձի ձևավորման մասին»**, ներկայացված է ծավալուն, բովանդակային և գաղափարապես հագեցած. այն կառուցված է համաչափ՝ գիտական մտածողությանը և տրամաբանությանը համապատասխան: Հաջողությամբ համադրված են փիլիսոփայական, աստվածաբանական և մանկավարժական մոտեցումները, որոնք արտահայտում են խոր հարգանք հոգևոր արժեքների, ազգային ինքնության և համամարդկային բարոյականության նկատմամբ:

Երկրորդ ենթազխում՝ **«Փիլիսոփայության և կրոնի փոխառնչությունները Վեհափառի հայացքներում»**, վերլուծված են Գարեգին Ա կաթողիկոսի կրոնական ու փիլիսոփայական հայացքները, շեշտադրելով՝ հավատքի և բանականության ներդաշնակությունը, կրոնի և փիլիսոփայության փոխլրացնող բնույթը:

Հատկապես արժեքավոր է խոկման, սիրո երկչափության (ուղղահայաց և հորիզոնական) և իշխանության՝ որպես ծառայության մեկնաբանությունները:

Չորրորդ գլխի երրորդ ենթազխում՝ «Դաստիարակության հարցերը Վեհափառի աշխատություններում», վերլուծված են Գարեգին Ա Վեհափառ կաթողիկոսի դաստիարակչական և կրոնափիլիսոփայական մտքերն ու գաղափարները՝ դաստիարակությունը դիտարկելով որպես մարդու ամբողջական՝ մարմնական, մտավոր և հոգևոր ներդաշնակ զարգացման գործընթաց: Այս ենթազխումն առանձնանում է նաև մեջբերումների ճիշտ ընտրությամբ և դրանց մեկնաբանությամբ:

Չորրորդ ենթազխում՝ **«Հայրենասիրական դաստիարակության գաղափարը Վեհափառ Հայրապետի աշխատություններում»**, ներկայացված և վերլուծված են հայ ժողովրդի դաստիարակչական մտածողության պատմաքաղաքական և հոգևոր

հիմքերը՝ հենվելով Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հայեցակարգային մոտեցումների վրա: Այստեղ ընդգծվում է դաստիարակության և արժեքային համակարգի անխզելի կապը ազգային ինքնության պահպանման և հոգևոր-բարոյական հզորացման գործընթացի հետ: Հեղինակը վերլուծում է Վեհափառի տեսակետները՝ որպես ժամանակից վեր հնչող դաստիարակչական ծրագիր, որը միավորում է հավատը, հայրենասիրությունը, լեզուն և ընտանիքը՝ ներկայացնելով դրանք որպես հայի ինքնության և ազգային գոյատևման հիմնաքարեր:

Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, որոնք դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ՝ պատմականից դեպի տեսական և կիրառական եզրահանգումներ, և որոնք բովանդակում են առաջադրված խնդիրների լուծումները:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժեքը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, այնուամենայնիվ, նշենք որոշ նկատառումներ աշխատանքի վերաբերյալ.

1. Ատենախոսության 4.3 ենթագլուխը կարելի էր բաժանել ենթաբաժինների, օրինակ «Դաստիարակության էությունը Վեհափառի ընկալմամբ», «Կրոնական դաստիարակության նշանակությունը և հիմքերը» և այլն:
2. Չնայած աշխատանքում արված մեջբերումները խիստ արժեքավոր են, սակայն որոշ հատվածներում երբեմն դրանք երկար են, որոնք կարելի էր ավելի համառոտ ներկայացնել:
3. Աշխատանքում կան որոշ մտքերի կրկնություններ:
4. Աշխատանքում կան համակարգչային, տեխնիկական վրիպումներ:

Այս նկատառումները բնավ չեն ստվերում պատշաճ, գիտական բարձր մակարդակով մշակված, աղբյուրագիտական հարուստ և գաղափարապես ամբողջական հետազոտական աշխատանքի նշանակությունը:

Վիկտորիա Ռուբենի Բաղդասարյանի «**Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ**» վերնագրով ատենախոսական աշխատանքում առաջին անգամ գիտական վերլուծության են ենթարկվում Գարեգին Առաջին Վեհափառի մանկավարժական հայացքները, համակարգված կերպով ուսումնասիրվում են նախկինում չիրապարակված կամ քիչ ուսումնասիրված արխիվային նյութեր,

համադրելով հոգևոր առաջնորդի գործունեության տարբեր ուղղությունները և բացահայտելով նրա փիլիսոփայական, հոգեբանական մոտեցումները ուսուցման, դաստիարակության, անձի ձևավորման հարցերին:

Այս առումով Վիկտորիա Ռուբենի Բաղդասարյանի «Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ» վերնագրով ատենախոսական աշխատանքն արժեքավոր ներդրում է հայ մանկավարժության տեսության և պատմության զարգացման գործում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ» վերնագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Վիկտորիա Ռուբենի Բաղդասարյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.01 թվանիշով «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է «Մանկավարժության» ամբիոնի՝ 2025թ.-ի նոյեմբերի 10-ի թիվ 5 նիստում:

Նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը, Ն. Գալոյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտական քարտուղար՝ Կ.Գ.Թ., դոցենտ՝



8

Կ. Պետրոսյան